

ՖԱԵԶ ԷԼ ՂՈՍԵՅՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ¹

1915 թ. եղևոնի մասին կան շատ աշխատություններ, պատմական ուսումնասիրություններ, պաշտոնական տեղեկագրեր, որոնք գրված են օտարների կողմից (ղոկտոր Հեփսիուս, Ջեյմս Բրայս, Մորգենթաու և ուրիշներ)։ Դրանց շարքում իր տեղն ունի մահմեդական արաբ Ֆաեզ էլ Ղոսեյնի «Հայկական կոտորածները» վերնագրով գրքույկը։ Ֆաեզ էլ Ղոսեյնը, Սիրիայի Հաուրանի շրջանի Սուլութ բեղվին ցեղի շեյխերից մեկի որդին, իր ուսումը ավարտելով Կ. Պոլսում, նշանակվել էր հարբերդի շրջանի Մամուրիեթ էլ Աղիդիեի կայմակամ (զավառապետ)։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անգլիան ու Ֆրանսիան արաբներին խոստանում են Թուրքիայի պարտությունից հետո արաբական անկախ պետություն ստեղծել, եթե արաբները ապստամբեն սուլթանական տիրապետության դեմ։ 1916 թ. հունիսի 10-ին Մեքքայի Շերիֆ Հյուսեյնը արաբների անունից «սրբազան պատերազմ» է հայտարարում Թուրքերի դեմ։ Այս ամբաստանությանը Ջեմալ փաշան Սիրիայում կախաղան է հանում առավել աչքի ընկնող արաբ բաղադրական գործիչներին, իսկ ոմանց էլ, որոնց թվում նաև Ֆաեզ էլ Ղոսեյնին, արսորում էրզրումի շրջանը։ Տիգրանակերտի նահանգապետը նկատի առնելով, որ ուսական զորքերը մոտենում են էրզրումին, հրամայում է հեռուները շտանել Ֆաեզ էլ Ղոսեյնին և երկու ամիս նրան բաղադրի բանտում պահելուց հետո ազատ է արձակում։ Ավելի քան վեց ամիս այս բաղադրում մնալուց հետո Ղոսեյնը, մեծ դժվարություններով, հասնում է Բասրա և այնտեղից էլ Հեղկաստան, որտեղ և արաբիկներն ընդունում զինվորական կոտորածները» վերնագրով գրքույկը, ուր ամփոփված են իր տեսածներն ու լսածները։ Հեղինակը, ինչպես ինքն է ասում, նվիրական պարտքն է համարել մերկացնելու հայերի նկատմամբ իթթիհատական կառավարության կատարած ոճրագործությունները։ Նա իր գրքույկի առաջարանում գրում է. «Այդ ժամանակամիջոցում էր, որ ականատեսիս եղա ու լսեցի այն ամենի մասին, ինչ որ կատարված էր ու կատարվում էր հայ անմեղ ժողովրդի նկատմամբ մեծ մասամբ գործադրված բարձրաստիճան պաշտոնյաների, սպաների ու երեկիների կողմից՝ Տիգրանակերտի, Վանի, Բիթլիսի, Մամուրիեթ էլ Աղիզի, Հալեպի, էրզրումի և այլ շրջաններում»։ Ֆաեզ էլ Ղոսեյնը հասկանալի պատճառով չէր կարող գրել ամբողջ մեկ միլիոն հայության բնաջնջման մասին, որ տեղի ունեցավ ողջ Թուրքիայում և Միջագետքի անապատներում։ Նա իրավացի կերպով նշում է, որ իր գրածը մեկ «մասնիկն էր եղածների»։ Սակայն, հեղինակն այդ մեկ մասնիկով լայն կերպով պատկերել է համատարած կոտորածները և սրտի խոր կսկիծով համոզում է իր ընթերցողներին, որ անմեղ ժողովրդի ոչնչացումն, իրոք, իրողություն էր։ «Լուրեր հավաքելով ծանոթ մարդկանցից,— շարունակում է նա,— կարողացա ճշմարիտ մանրամասնությունների ամբողջ իրողությունները հասկանալ, այնպես որ, երբ պատերազմը վերջանա և մարդիկ այս գրվածքները կարդան, պետք է գիտենան, որ այն իրողություն է և մեկ մասնիկը միայն եղածների, որ կատարվեցին Թուրքերի կողմից դժբախտ հայ ժողովրդի հանդեպ։ Մտածեցի այս գրքույկը գրելով արդարությունը երևան հանել և այսպիսով ծառայություն մատուցանել մարտիրոս ժողովրդին» (էջ 4)։

Այս առաջարանից հետո, հեղինակը մանրամասնորեն նկարագրել է այն, ինչ ինքը տեսել և լսել է այդ սարսափելի ոճիրների մասին։

Դեպի էրզրում աքսորի ճանապարհին Ֆաեզ էլ Ղոսեյնի առաջին մեծ հանգրվանը եղել է Ուրֆան։ Այստեղի հայությունը շինթարկվելով տեղահանության հրամանին, պաշտպանության դիրքեր է գրավում բարձրագույն հայկական թաղամասում։ Սակայն, Ջեմալ փաշայի Հալեպից ուղարկած օգնական զորքերը, որոնց հրամանատարն էր Ֆահրի փաշան, ականատես հեղի-

¹ Faiez El-Ghocetn, Temoignage d'un Arabe musulman sur l'innocence et le massacre des Arméniens, Trad. de l'Arabe par A. El-G, Bombay, 1917, 46 p. Այս դիրքը թարգմանվել և հայերեն լույս է տեսել 1960 թ. Կահիրեում։

նակի ասելով, «Յնդանոթի չարվածներով հիմնահատակ կործանեց հայկական թաղերը, կոտորելով այր մարդկանց, երեխաներին և կանանց... Երբ մենք Ուրֆայից հեռացանք,— գրում է էլ Ղոսեյնը,— հանդիպեցինք հոգեւոյթից ուժասպառ եղած ցնցոտիազգեստ կանանց խմբերի, դիակները ծածկել էին ճանապարհի երկու կողմերը» (էջ 8)։

1915 թ. Կ. Պոլսում ձերբակալում են հարյուրավոր հայ մտավորականների և ճանապարհին ոչնչացնելու նպատակով արքայում։ Գրիգոր Զոհրապը խիստ հուզված իթթիհատականների հայաստան արարքից, դիմում է Թալեաթ փաշային ասելով, «Ապահով եղեք, մի օր հաշիվ պիտի պահանջվի ձեզանից և դուք չպետք է կարողանաք արդարացնել ձեր արարքները»։ Թալեաթի այն հարցին թե ով պիտի պահանջի այդ հաշիվը, Զոհրապը պատասխանում է. «Ես, խորհրդարանի մեջ իբրև հայ մեկուս, ձեզանից հաշիվ պիտի պահանջեմ»։

Որպես թուրքական պառլամենտի անդամ, Զոհրապի անձը անձեռնմխելի էր. հակառակ դրան, Թալեաթի հետ ունեցած այս խոսակցությունից մեկ օր հետո, նա ձերբակալվում և Վարզգեսի հետ արքայում է։ «Ճանապարհին,— գրում է Ֆահդ էլ Ղոսեյնը,— մեզ առաջնորդող թուրքերից մեկը հեռվից ցույց տվեց բլուրի մոտ քարերի մի կույտ և հայտնեց թե այնտեղ էր ուր սպանվեցին Զոհրապը և Վարզգեսը, հանրածանոթ երկու հայ երեսփոխանները» (էջ 9)։

Ֆահդ էլ Ղոսեյնը Ուրֆայից մինչև Տիգրանակերտ ընկած ճանապարհին ականատես է եղել հազարավոր անմեղ հայերի զսպանարար սպանությունների՝ թուրք մարդասպանների որդեգրած բազմաթիվ եղանակներով։ «Միշտ դիակներ,— գրում է նա,— այստեղ՝ կուրծքը գնդակով ծակված մի մարդ, այնտեղ՝ արգանդը ճեղքած մի կին՝ կողքը մի երեխա հավիտենական քնած, ավելի հեռուն մի երիտասարդուհի՝ բիրտ ձեռքերով իր մերկությունը ծածկած։ Ով կարող է նկարագրել այն զգացումները, որոնք ականատեսի սիրտն են ճմլում երբ մտաբերում է այս դժբախտ և հերոս ազգը, որ դարձացրեց աշխարհը իր արիության մի քաջասրտությամբ...» (էջ 13)։

Հայերին ջարդելու բազմաթիվ եղանակներ են որդեգրել զահիճները. հարյուրավոր հայեր հավաքել խոտի մթերանոցներում և, խոտը կրակի տալով շնահեղձ անել բլուրին, խմբերով նստեցնել բեռնանավերի մեջ և թալանելուց հետո բլուրին ջրասույզ անել նփրատ և Տիգրիս գետերում, կացնի հարվածով մարդկանց զուլխներ ջախջախել, հայ աղջիկներին բռնաբարել և հետո սպանել, տասնյակներով կանանց ու երեխաների թևերը կապել ու բարձունքից գցել ձորը և ջարդարարական ուրիշ մեթոդներ։

Ֆահդ էլ Ղոսեյնի վկայությամբ, Տիգրանակերտի կուսակալ Ռաշիդ բեյի հրամանով և Տիգրանակերտի իթթիհատականներ Ռուշտի բեյի, թուրքական պառլամենտի ղեկավարատ Ֆեյզի բեյի Փիրինճի Զադեի և ուրիշների ակտիվ մասնակցությամբ հավաքում են քաղաքի հայ մտավորականներին՝ իրենց ընտանիքներով մոտ 700 հոգի, և Մոսուլ տեղափոխելու պատրվակով բեռնանավերի մեջ լցնելով՝ ջրասույզ անում Տիգրիսում։ Հիշատակության արժանի է հետևյալ հանգամանքը. Տիգրանակերտի հայոց ջարդերից ու կոլոպուտներից հետո Ֆեյզի բեյի Փիրինճի Զադեն իթթիհատի կենտրոնին է ուղարկում 15 միլիոն ղուրուշ, իսկ կուսակալ Ռաշիդ բեյը 1918 թ. գինադադարից հետո ձերբակալվելով՝ բանտից փախչում է, սակայն իմանալով, որ հայերի կողմից հետապնդվում է, ինքնասպան է լինում Պեշիկթաշում։

Ֆահդ էլ Ղոսեյնը իր գրքույկի վերջում տալիս է հայկական կոտորածների ընդհանուր մի տեսություն և արքայած ու սպանված հայերի վիճակագրությունը։ Այդ տվյալները նրան հաղորդել է Տիգրանակերտի բանտում գտնվելու ժամանակ իրեն այցելած բարեկամներից մեկը, որին հանձնված է եղել հայերի ջարդը ղեկավարելու գործը։ «Մեր տեսակցության ընթացքում,— գրում է նա,— տեղեկացա, որ Տիգրանակերտի և այլ գավառների մեջ ջարդված հայերի թիվն էր 620.000։ Վանի և Բիթլիսի գավառապետության և Մուշի կուսակալության մեջ կոտորվածների թիվն էր՝ 230.000։ Նրանք որ ջարդվեցին էրզրումի, հարբերդի, Սվազի, Կ. Պոլսո, Տրապիզոնի, Ատանայի, Պրուսայի, Ուրֆայի, Զեյթունի, Այնթապի գավառապետությունների մեջ հաշվվում են՝ 350.000։ Գտնում ենք, որ հայերը, որոնք ջարդվեցին կամ կորան սովի, ծարավի և հիվանդությունների պատճառով պակաս չեն քան 1.200.000» (էջ 37)։

Ֆահդ էլ Ղոսեյնը հերքում է իթթիհատականների այն պնդումը, թե իբրև հայերը Վանի մեջ մահմեդականներ են ջարդել, արգելված զենքեր են պահել և հարմար առիթի են սպասել սուլթանական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելու համար և այլն։ Նա մերժելով թուրքական այս մտացածին վերսիսան, գրում է. «Մի քննություն կատարեցի Վանի բնակիչների և պաշտոնյաների մոտ, որոնք Տիգրանակերտում էին գտնվում, տեղեկացա, որ հայերը ոչ մի մահմեդական չեն ջարդել ո՛չ Վանում և ո՛չ էլ շրջակա բնակավայրերում։ Գալով Տիգրանակերտի եղևություններին, ես կարողացա իմանալ պատճառները։ Ոչ միայն հայերի կողմից ջարդեր

կամ խոռովություններ տեղի չեն ունեցել, նրանք նույնիսկ ամենափոքր դեպքի տեղիք չեն տվել շարդարացնելու համար իրենց հանդեպ թուրքերի անզուրկ արարքները» (էջ 39)։

Նգիպտական «էլ Մոկատտամ» թերթը հետևյալ տողերն է գրել այս գրքի մասին. «Մարդերը կարդում է այս գիրքը ու քիչ վերջը մրափել է դալիս վրեն, հազիվ հազ աչքերը փակած, իր առջև պատկերում է այդ ամբողջ արհավիրքները ու ընդոստ տեղից վեր կենալով բառացիորեն պիտի ցույց տա ամբողջ մարդկությանը։ Նա չպիտի հավատա, թե ներկա դարում, ուր մասնավոր ընկերություններ են կազմված անասունների պաշտպանության համար, սլիտի գտնվեն մարդիկ, որոնք իրենց նմանների հանդեպ այս կերպ վարմունք ունենային. արդյոք մարդկությունը այնտեղ անասնացուծ է, նրանք դեպի վայրենիություն են գնում, թե իրենց բախտը հավասար է գիշատիչ անասունների բախտին»։

Ֆանզ էլ Ղոսեյնի այս գիրքը թարգմանվել է ֆրանսերեն, բայց այն դեռևս անծանոթ է հայ ընթերցողին, հատկապես երիտասարդ սերնդին²։ Գիրքը արարական ժողովուրդների դեպի հայերը տածած համակրանքի վառ արտահայտությունն է։ Նրկու բախտակից ժողովուրդները, մեկը քիչ, մյուսը շատ, նույն հալածանքներին են ենթարկվել սուլթանական իշխանությունների կողմից։ Հեղինակը մերկացնող փաստերով դատապարտում է երիտասարդ թուրքերի հանցավոր քաղաքականությունը։

2 Հոնդոնի հայ գաղութը, իբրև երախտագիտության նշան, Ֆանզ էլ Ղոսեյնին մի ժամացույց է նվիրել՝ հայության հանդեպ իր մատուցած ծառայությունների համար։

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ